ՀՀ ՕՐԵՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՄԱՍԻՆ

Հոդված 8. Պետական պահուստի համակարգի ֆինանսավորումը

1. Պետական պահուստի համակարգի պահպանման, սպասարկման և զարգացման ծախսերի ֆինանսավորումը, պետական պահուստի նյութական արժեքներով գործառնությունների կատարումն իրականացվում են պետական բյուջեի, պետական պահուստի նյութական արժեքներով գործառնություններից ստացվող միջոցների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

2. Պետական պահուստի նյութական արժեքներով գործառնություններից ստացվող միջոցները Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանված կարգով ուղղում է բացառապես պետական պահուստի ձևավորմանը:

Deleted: և ու պետական պահուստի համակարգի զարգացման

3. Պետական պահուստի ձևավորման, պետական պահուստի համակարգի պահպանման և զարգացման ծախսերը առանձին հոդվածով արտացոլվում են պետական բյուջեի մասին օրենքում: